

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Վարկերի տրամադրման աշխարհագրական շրջանակը	ՀՀ
Վարկառու	18 տարին լրացած ցանկացած ֆիզիկական անձ
Վարկառուի/Երաշխավորի եկամուտի աղբյուր (անհրաժեշտության դեպքում)	Եկամուտը հավաստող փաստաթղթեր և/կամ այլ տեղեկատվություն ֆինանսական հոսքերի մասին
Տրամադրվող գումարի մեծությունը	Նվազագույնը՝ 200,000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 100,000,000 ՀՀ դրամ
Վարկ/Գրավ	Գրավադրվող գույքի շուկայական արժեքի մինչև 70 տոկոսը
Տարեկան անվանական տոկոսադրույք	Սկսած 13%-ից մինչև 24%
Տարեկան փաստացի տոկոսադրույք	14.52% - 34.46%
Մարման եղանակ	Ըստ հաճախորդի ընտրության՝ անուիտետային վճարումներ, կամ այլ երկկողմ ընդունելի տարբերակ
Տոկոսագումարի հաշվարկման և վճարման կարգը	Տոկոսագումարի հաշվարկը կատարվում է վարկի մնացորդի նկատմամբ օրական կտրվածքով և ենթակա է վճարման ամսական պարբերականությամբ
Վարկի ժամկետը	12-ից մինչև 120 ամիս
Վարկի գումարի և տոկոսագումարի մարումները	Վարկային պայմանագրով նախատեսված ժամանակացույցի համաձայն

Վարկի դիմում-հայտի ուսումնասիրության վճար	5,000 ՀՀ դրամ
Վարկի սպասարկման վճար	0-0.5 %, որը հաշվարկվում է վարկի մնացորդի վրա և վճարվում է ամսական պարբերականությամբ
Վարկառուի/երաշխավորի վարկային պատմության հանդեպ պահանջ	Գործող վարկերը չպետք է լինեն դասակարգված որոշումը կայացնելու պահին
*Վարկային պարտավորությունների կատարման ապահովման միջոցները	Անշարժ և շարժական գույք, երաշխավորություն, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված այլ եղանակներ
Երաշխավոր	18 տարին լրացած ցանկացած ֆիզիկական անձ և/կամ իրավաբանական անձ
Վարկային հայտի ուսումնասիրության ժամկետը	Անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընդացքում
Վարկառուին վարկի տրամադրման ժամկետ	Համապատասխան պայմանագիրը նոտարական կարգով կնքելուց և պետական լիազոր մարմիններում համապատասխան ձևակերպումներ իրականացնելուց հետո 3 բանկային օրվա ընթացքում
Վարկի տրամադրման եղանակ	Վարկը տրամադրվում է միանվագ կամ փուլերով՝ համաձայն կողմերի միջև ձեռք բերված պայմանավորվածության
Ժամկետանց վարկի գումարի գծով հաշվարկվող տույժ	0.13% տույժ ժամկետանց վարկի մայր գումարի նկատմամբ՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար
Ժամկետանց տոկոսագումարի գումարի գծով հաշվարկվող տույժ	0.13% տույժ ժամկետանց տոկոսագումարի նկատմամբ՝ յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար
Վաղաժամկետ մարման տույժ	Սահմանափակումներ չկան

*2 միլիոն դրամը գերազանցելու դեպքում՝ պարտադիր անշարժ/շարժական գույքի գրավ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Պարտավորության մարման ժամկետներում վարկառուի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում վարկատուն վարկառուի պարտքի վերաբերյալ տեղեկությունները ուղարկում է ՀՀ կենտրոնական բանկի վարկային ռեգիստրին և վարկային բյուրոներ (ԱՔՌԱ և այլն):

Վարկառուն տեղեկացված է նաև, որ վատ վարկային պատմություն ունենալը իր համար հետագայում կարող է խոչընդոտ հանդիսանալ այլ վարկեր ստանալիս: Դուք իրավունք ունեք վարկային բյուրոյից տարեկան մեկ անգամ անվճար ստանալ Ձեր վարկային պատմության զեկույցը:

Վարկառուն կարող է զրկվել գույքի (բնակարանի կամ տան) նկատմամբ իր իրավունքներից, եթե չկատարի կամ ոչ պատշաճ կատարի վարկային պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները:

Վարկառուի կողմից պարտավորությունների չկատարման դեպքում գրավի հաշվին պարտավորությունները մարելիս գրավը բավարար չլինելու դեպքում հնարավոր է պարտավորությունների մարում վարկառուի այլ գույքի հաշվին:

Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում մարումներն իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝ գումարի բռնագանձման ուղղված ծախսեր, այդ թվում դատական ծախսեր (առկայության դեպքում), տոկոսների տուժանք, վարկի մայր գումարի տուժանք, տոկոսներ, սպասարկման վճար և միջնորդավճարներ (առկայության դեպքում) և վարկի գումար: Վարկատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանիորեն փոփոխելու սույն կետում նշված մարումների հերթականությունը:

Եթե վարկառուն չկատարի պարտավորությունները, ապա երաշխավորն է վճարելու նրա փոխարեն, վատանալու է երաշխավորի վարկային պատմությունը և նա զրկվելու է գույքից:

Վարկատուն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից՝ «Ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքով պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ հաճախորդին:

Վարկատուն իրավասու է փոփոխել և լրացնել մատուցվող լրացուցիչ ծառայությունների սակագները՝ պայմանագրով սահմանված կարգով ծանուցելով այդ մասին հաճախորդներին՝ վարկատուի ինտերնետային կայքում (www.creditcorp.am) հաղորդություն հրապարակելով, գործունեության տարածքում հայտարարություններ փակցնելու միջոցով, հաճախորդի կողմից ընտրված ծանուցման այլ եղանակով տրամադրելու միջոցով, որը համարվում է Հաճախորդի պատշաճ իրազեկում(ծանուցում):

Մինչև 15 մլն ՀՀ դրամին համարժեք գումարի չափով վարկ ստանալու համար դիմելիս վարկատուն Ձեզ կտրամադրի սպառողական վարկի էական պայմանների

անհատական թերթիկ, որում կներկայացվեն Ձեզ տրամադրվելիք վարկի անհատական պայմանները:

Հաճախորդն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու վարկային պայմանագիրը՝ դրա կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում (մտածելու ժամանակ)՝ հետ վերադարձնելով իր ստացած վարկի գումարն ամբողջությամբ և վճարելով տոկոսներ, որոնք հաշվարկվում են պայմանագրով նախատեսված տարեկան փաստացի տոկոսադրույքին համապատասխան:

Հաճախորդն իրավունք ունի վարկային պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու)՝ անկախ այն հանգամանքից, թե նման իրավունք վարկային պայմանագրով նախատեսված է, թե ոչ:

Վարկի տոկոսագումնարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը Ձեզ համար տոկոսագումնարները և վարկի տրամադրման և սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում: Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը ներկայացված է հետևյալ հղմամբ՝ [ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱԳԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ](#):

Անշարժ գույքի գրավի պայմանագիրը պետք է վավերացվի նոտարական կարգով: Գույքի նկատմամբ սեփականության իրավունքը, գրավի իրավունքը և այլ գույքային իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Սպառողական վարկերի պայմաններին կարող եք ծանոթանալ նաև [ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒՆ](#) որոնման, համեմատման համակարգի միջոցով:

Կողմերի միջև ծագած վեճերը կարող են լուծվել դատական կարգով կամ ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով («ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով), հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ, էլ. փոստ՝ info@fsm.am, հեռախոս՝ (+37460) 70 11 11, ֆաքս՝ (+37410) 58 24 21:

«ԿՐԵԴԻՏ ԿՈՐՊ ՈՒՎԿ» ՓԲԸ-ն պատասխանատվություն չի կրում իր կայքում հղում կատարված ինտերնետային կայքերի բովանդակության, ստույգության և արժանահավատության, այնտեղ տեղադրված գովազդների և տեղեկատվության օգտագործման հնարավոր հետևանքների համար:

ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՔՈՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Վարկային պատմության էությունը

Վարկային պատմությունը ֆիզիկական կամ իրավաբանական անձի ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվության ամբողջությունն է, որը ցույց է տալիս վերջինիս ֆինանսական պարտավորությունների կամ դրանց կատարման պատմությունը: Վարկային պատմության մեջ ներառվում են հարցման պահին նախորդող 5 տարիների վերաբերյալ տվյալները, և այն ձևավորվում է՝

- անձի ստացած ֆինանսավորումներից, այդ թվում՝
- դրանց քանակից և գումարից,
- յուրաքանչյուր ֆինանսավորման գումարից, տեսակից, ժամկետներից, դրա գծով վարկատուի կողմից կիրառվող անվանական տոկոսադրույքից,
- ֆինանսավորման ապահովում հանդիսացող գրավների վերաբերյալ տեղեկատվությունից,
- վարկից բխող մարումների կատարման պարտաճանաչությունից (օրինակ՝ ժամանակին են վճարվել տոկոսներն ու մայր գումարը, թե՛ ոչ),
- այլ անձանց տրամադրված երաշխավորություններից, դրանց քանակից և գումարից, յուրաքանչյուր երաշխավորությամբ ապահովված վարկի տեսակից, ժամկետներից և գրավների վերաբերյալ տեղեկատվությունից,
- ֆինանսավորումների և երաշխավորությունների գծով ժամկետանց օրերի/գումարների առկայությունից, ինչպես նաև դրանց համար սահմանված տույժ ու տուգանքներից,
- չվճարված կամ ուշացված կոմունալ վճարներից:

Վարկային պատմությունը չի պարունակում անձնական բնույթի տվյալներ, ինչպես օրինակ անձի էթնիկական պատկանելիություն, կրոնական և քաղաքական հայացքներ, սոցիալական վիճակ և այլն:

Վարկային սքոր գնահատականի էությունը և տեսակները

Վարկային սքոր գնահատականը ցուցանիշ է, որը ձևավորվում է վարկային պատմության հիման վրա և ցույց է տալիս՝ որքանով է տվյալ անձը պարտաճանաչ որպես վարկառու: Վարկ ունեցած չլինելու պարագայում անձը չի կարող ունենալ նաև սքոր գնահատական:

Վարկային հարցման ազդեցությունը սքոր գնահատականի վրա

Կախված վարկային հարցման տեսակից՝ այն կարող է ազդել ԱՔՌԱ վարկային բյուրոյի կողմից կիրառվող սքորի տեսակների՝ ԱՔՌԱ սքոր և ՖԱՅԿՈ սքոր, ինչպես նաև ֆինանսական կազմակերպությունների կողմից կիրառվող սեփական սքոր գնահատականների վրա:

Հարցումների նպատակների և վարկային սքոր գնահատականի վրա դրանց ազդեցության վերաբերյալ մանրամասները ներկայացված են ստորև աղյուսակում.

Վարկային հարցման նպատակ	Վարկային հարցման ենթանպատակ	Ազդեցությունը վարկային սքորի վրա
-------------------------	-----------------------------	----------------------------------

Նոր վարկային դիմում		Նվազեցնում է
Երաշխավոր անձ	Նոր վարկային դիմում	Նվազեցնում է
Փոխկապակցված անձ		Չի ազդում
Գործող վարկի մոնիտորինգ		Չի ազդում
Երաշխավոր անձ	- Գործող վարկ - Գործող երաշխավորի մոնիտորինգ	Չի ազդում
Այլ բանկային ծառայություններ		Չի ազդում

Վարկային պատմության և սքոր գնահատականի կարևորությունը

Վարկային պատմությունը և սքոր գնահատականը կարևոր են, քանի որ վարկի համար դիմելուց, բանկը կամ վարկային կազմակերպությունը, մինչև վարկ տրամադրելու որոշում կայացնելը, ուսումնասիրում է դիմումատուի վարկային պատմությունն ու գնահատում, թե որքանով է պատասխանատու վերջինս՝ որպես վարկառու:

Վարկ տրամադրելու դրական գործոններ՝ Վարկ ստանալու դիմումի ներկայացման օրվա դրությամբ վարկառուն պետք է չունենա ժամկետանց/դասակարգված պարտավորություններ (վարկ, վարկային գիծ, օվերդրաֆտ, տրված երաշխավորություն և այլն):

Վարկի մերժման գործոններ՝ բացասական վարկային պատմությունը, գրավի առարկայի անհամապատասխանությունը ընկերության պահանջներին, կեղծ կամ անարժանահավատ տեղեկատվության տրամադրումը, այնպիսի տեղեկատվության տրամադրումը, որը կասկածի տակ է դնում վարկի վերադարձելիությունը, հաճախորդի էլ. փոստի բացակայությունը և այլ գործոններ:

Ձևավորված «Վատ վարկային պատմությունը» կարող է հանդիսանալ ֆինանսավորման տրամադրման մերժման պատճառ:

Սխալ կամ թերի տվյալների շտկում

Եթե վարկառուի վարկային պատմության մեջ առկա են սխալ կամ թերի տվյալներ, ապա պարզաբանման և ուղղման նպատակով վարկառուն կարող է այդ մասին տեղեկացնել «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին, այսուհետ՝ Վարկային բյուրո, կամ ուղղակիորեն դիմել տեղեկատվություն տրամադրող ֆինանսական կազմակերպություններին: Վարկային բյուրոյին տեղեկացումը կարող է իրականացվել համապատասխան գրավոր դիմում ներկայացնելու միջոցով կամ էլեկտրոնային եղանակով՝ առցանց ռեժիմում «ԻՄ ԱՔՌԱ» անձնական գրասենյակից:

Վարկային բյուրոյի կողմից տրամադրված վարկային զեկույցների վերաբերյալ հաճախորդների բողոքների ընդունման/ստացման, քննարկման և վերջիններիս արձագանքման գործընթացը, գործողությունների հաջորդականությունը սահմանվում է «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ի «Վեճերի լուծման ընթացակարգ»-ով:

Վարկային պատմության և սքոր գնահատականի բարելավման քայլեր

Վարկային պատմությունը և սքոր գնահատականը բարելավելու համար անհրաժեշտ է նախ շտկել դրանք վատթարացնող հիմնական պատճառները, մասնավորապես՝ հարկավոր է առաջին իսկ հնարավորության դեպքում արագ մարել գործող ժամկետանց պարտավորությունները, ինչպես նաև՝

- թեթևացնել վարկային բեռը՝ մարելով գործող վարկերը՝ մասամբ կամ ամբողջությամբ,
- մարումները կատարել սահմանված գրաֆիկին համապատասխան՝ բացառելով ուշացումները և ցուցաբերելով ճշտապահ վարքագիծ,
- նվազեցնել տրված երաշխավորությունները՝ կրճատելով դրանց քանակը, գումարը, ինչպես նաև առկայության դեպքում ապահովելով այս մասով ժամկետանց պարտավորությունների լրիվ մարումը,
- բացառել ընթացիկ վարկերի գծով պարտավորությունների կատարման նույնիսկ մեկօրյա ուշացումները և խուսափել անվստահելի անձանց համար երաշխավոր դառնալուց,
- խուսափել հաճախակի նոր վարկերի ստացման համար դիմելուց:

Մանրամասները՝ abcfinance.am և acra.am հղումներում:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ ԵՐԵՔ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՁԵՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵՂ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ: